Փայտամշակության մեջ էլ կրկնվել է նույն իրողությունը, ինչ որ աչքի էր զարնում ջուլհակության մեջ՝ զարդերի աղքատություն, նույնիսկ բացակայություն։ Մինչդեռ աղգագրական առանձնահատկություններով Զանգեզուրին շատ մոտիկ Լոռում սիրում են փայտե պարագաները ծածկել փորագրություններով և ամեն տան մեջ կարելի էր գտնել գեղեցիկ փորագրված խօնշանէր, դդալներ, շերեփներ, դդալամաններ, տուփեր, օրորոցներ, բարձափէտէր։ Զանգեզուրում այդ իրերի երեսները մնում էին առանց քանդակի, շատ-շատ չարխելիս խորացած կամ բարձրացրած գծերով խազված։

ՄԵՏԱՂԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

ՊՂՆՁԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Երկաթը Զանգեզուրում դրսից բերովի է։ Նրանից հարկավոր իրեր շինողը դամրչին՝ դարբինն էր, որը միաժամանակ և փականագործ էր։ Դարբնությունն այստեղ էլ, ինչպես և այլ հայաբնակ շատ գավառներում, մի ընտանիքի մեջ ժառանգաբար անցնող զբաղմունք էր։ Վերջերքս վարպետը խույս չէր տալիս այդ արհեստը սովորեցնելու և ոչ հարազատ մեկին։ Այստեղ էլ Ուքի ուրբաք օրը դամրչին շինում էր երեխաների շորերի վրա կարելու համար կայծակի հարվածից պաշտպանող շախմախը և կանանց ձեռքին բարաֆաք տվող պողպատե մատանին, այստեղ էլ ամեն շաբաթ երեկո նա աշխատանքն ավարտելիս իր մեծ մուրճով՝ զնդանավ, զարկում էր դատարկ սալին շար Արտավազդի շղթաներն ամրացնելու համար։

Պղինձն է, որ տեղական մետաղ է այս գավառում։ Կապանի պղնձահանքերն առաջին տեղն են բռնում Անդրկովկասում իրենց արտադրանքի ծավալով և Միության նման հանքավայրերի շարքում կարևորագույններից են։ Պղնձահանությունը խորին հնությունից եկող պարապմունք է այստեղ և ինչպես երևում է մերձակայքում պատահական պեղումների ժամանակ գտնված իրերից՝ իր շուրջն էր հավաքել համեմատաբար խիտ բնակչություն տակավին պղնձե դարում։ Այժմյան Կապան-Հանքեր բանվորական նորակառույց գեղեցիկ ավանում պահպանվել են շատ ավելի ուշ ժամանակաշրջանից կառուցված շենքերի մնացորդներ, այժմյան ֆլոտացիոն գործարանին կից բաղանիքներով։ Այս ու այնտեղ, մանավանդ շուկայում, թափված քարե սյուներն ապացույց են այն բանի, որ հանքավայրերը միշտ գրաված են եղել առանձին ուշադրություն։

Ռուսական տիրապետության հաստատման տարիներում և այնուհետև էլ դեռ երկար ժամանակ, գրեթե մինչև XIX դ. 50-ական և 60-ական թվականները, այստեղ իշխում էր հանքահանության շատ նախնական եղանակը, այս գործով պատահական զբաղվողները հանքը հանում էին համեմատաբար ավելի երես վայրերից, հասնելով նրան հորիզոնական փորված կարճ հանքահորերով և հանած քարը հալեցնում էին պրիմիտիվ քուրաների մեջ՝ գործածելով մերձակա դեռ բավականին խիտ անտառներից կտրած փայտը։

Բոլորովին կատարելագործված չէր և այն եղանակը, որը գործադրում էին այստեղ XIX դ. երկրորդ կեսում բուն դրած հույն պղնձահանները, սրանց մեջ նաև Կատարում և Կավատում վաղ հաստատված Կոնդուրով եղբայրները, ինչպես և նրանց օրինակին հետևելով Մելիք-Փարսադանյաններն իրենց տոհմական Հալիձորի հանքավայրերում։ Նրանք սկսեցին փորել ավելի խոր հանքահորեր։ Բանվորների ձեռքին հանքը քանդելու համար կար կարճ ու թեթև